



ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

ՆՈՒԷՐ

ձոխ անսառում ես սերեմ՝
 Ի՞նչ սամ կեանքին լուսառող,
 Ո՛չ գարուն եմ, ո՛չ արեւ,
 Գոնէ լինեմ մի բուռ հող,
 Որ իմ սրտից անմեակ՝
 Ծլի մի նուրբ մանուշակ:

Այս աշխարհին հրակէզ,
 Մի՞տ բերառաս, մի՞տ բեզուն,
 Ի՞նչ նուիրեմ, ի՞նչ սամ ես.
 Լինեմ փոքրիկ մի մեղու,
 Գնամ փեթակ ու բջիջ՝
 Մեղք շինեմ գէթ մի հիշ:

Տերեւներով ոլորած
 Շող ու շառայլ անհաւիւ,
 Կոկոնների մէջ կորած՝
 Լինեմ ճկուն դալար շիւ,
 Եւ բախտաւոր մի բալիկ
 Կսրէ որսէս խաղալիք:

Թէ քաֆնուի անունն իմ
 Մոռացութեան մուծի տակ,
 Թողնեմ այս լաւ աշխարհում
 Գէթ մի փոքրիկ յիշատակ.
 Եւ իմ սրտից անմեակ՝
 Ծլի մի նուրբ մանուշակ:

Այս պարզ երգը ես եմ հիւսել
 Յոյզի թել-թել յոյսեր բերող,
 Անհուն կարօտ ու սէր բերող,
 Սեւ սրտերին սուտեր բերող,
 Այս պարզ երգը ես եմ հիւսել:

Իմ սիրասուն երկրին լուսէ,
 Ցանկացել եմ մի խօսք ասել.
 Երբ ասելու ժամն է հասել
 Այս անպաճոյճ երգն եմ հիւսել
 Իմ սիրասուն երկրին լուսէ:

Հոգուս խորքում սաղարթախիտ
 Գարուններ կան ջինջ ու յսակ.

Տերեւ-տերեւ, կաթիլ-կաթիլ,
 Երգ եմ հիւսել այնտեղ նսած:

Դուրս եմ փաշտ սրտիս միջից,
 Ծաղիկներն իմ յոյզով սնած,
 Բայց դեռ հոգուս մարգերում ջինջ
 Կոկոններ կան մուտ-մուտ փած:

Յոյզի թել-թել յոյսեր բերող,
 Անհուն կարօտ ու սէր բերող,
 Սեւ սրտերին սուտեր բերող
 Այս պարզ երգը ես եմ հիւսել:

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐԵԱՆ

